թեան ենթարկի իր Խորհրդային նախորդի արեւելեան քաղաքականութիւնը, աւելի քան պարզ է:

Պարզ է նաեւ այն, որ այդ քաղաքականութեան առաջին արդիւնքներից մէկը պիտի լինի՝ առնուազն ու առաջին հերթին քեմալական Տաճկաստանի կողմից դրաւուած անդրկովկասեան գաւառների վերստացումը: Թող դա կատարուի Ռուսաստանի անունով եւ նրա ընդհանուր շահերի համար, բայց որ Սուրմալուն, Կարսը եւ Արտահանը նորէն Անդրկովկասին անցնելով ու թէկուզ վարչականօրէն միայն Հայաստանին կցուելով մեծապէս պիտի շահի նաեւ վերջինս, ակներեւ է ինքնին:

Երեւակայել, թէ ռուսական ռեւէ կառավարութիւն դիւրութեամբ պիտի զիջի Կարսը Տաճկաստանին, անկարելի իսկ է: Եւ նա այդ չի անի, որովհետեւ վատագոյն պարագային իսկ՝ նա ռազմապէս եւ քաղաքականապէս անբաղդատելիօրէն ուժեղ պիտի լինի, քան այսօրուան Խորհրդային Ռուսիան: Փաստ է, որ վերջինիս ձայնը եւ դիրքը միջազգային խընդիրներում աւելի թոյլ է եւ անզօր, քան ռեւէ ռուս կառավարութեան՝ անցեալում:

Խորհրդային Ռուսիան — չխարուենք շլացուցիչ բառերից եւ գոռում-գոչիւնից — այսօր աւելի ինչ չէ, քան մի երկրորդական պետութիւն՝ որպէս միջազգային քաղաքական ազդակ: Կարելի՞ բան է, որ 150–160 միլիոն հաշուող մի երկիր մշտապէս այդ վիճակի մէջ մնայ: Հարկա՛ւ ոչ:

Ահա թէ ինչու Անդորայի վարիչները որպէս երկնքից ընկած մի բարիք ողջունեցին Խորհրդային Ռուսաստանը — թուլացած եւ անզօր, ռազմական-քաղաքական ստուերը իսկական Ռուսաստանի: Եւ ահա թէ ինչու ի մէջ այլոց, Անդորան դողում է ամէն մի հաւանականութեան առջեւ, որ Ռուսաստանի վերակազդուրման, վերականգնման մասին է խօսում: Մանաւանդ նա գիտէ, որ վերազարթնած ռուսական ծովի ալիքները ի զօրու պիտի լինին շատ աւելի հեռուները եւս յորձանքներ առաջացնելու: Պարզ է ուրեմն, որ Տաճկաստանը թէկուզ այդ իսկ մէկ հատիկ պատճառով — շատ ուրիշները եւս կան — բոլշեւիկ դիքտատորներից յետոյ կամ նրանց համահաւասար՝ շահագրգռուած է Խորհրդային վարչակարգի պահպանումով եւ յարատեւումով, բայց միայն...իրենից դուրս, Ռուսաստանում: Որ նոյն այդ ռուսական ռէժիմը հսկայական ծառայութիւններ է մատուցել եւ մատուցում է Տաճկաստանին ուրիշ ճակատներում եւս, դա եւս աշխարհին ծանօթ փաստ է:

X

Եւ այսպէս, ապագայ Ռուսաստանը, որ որպէս դաշնակցային հանրապետութիւն մի-այն վերականգնել կարող է, բոլոր պարագաներում շատ աւելի նպաստաւոր պիտի լինի հայկական եւ Հայաստանի շահերի տեսակէտից, քան՝ արդի, Խորհրդային Ռուսաստանը: Վատթարագոյն պարագային իսկ՝ նա աւելի ընդունելի պիտի լինի մեզ համար, ներկայիս բաղդատութեամբ, քանի որ նա դէթ ինքն իր համար եւ իր մէջ ուժեղ պիտի լինի՝ հանդէպ հարեւան Տաճկաստանի, որով եւ հայութիւնը ամենավատ պարագային դէթ իր փոքրացուած հայրենիքում չարունակ չպիտի դողայ իր ֆիզիքական գոյութեան, իր վաղուան համար:

Լինինք արդար եւ չուրանանք պատմական փաստերը: Ցարական կառավարութիւնն անդամ այնչափ դաժան, անսիրտ չեղաւ կարկըտահար, փախստական հայ բեկորների հանդէպ, որչափ Խորհրդային Ռուսաստանը: 1895–96-ի կոտորածներից յետոյ՝ տասնեակ հազարաւոր փախստական տաճկահայերի մուտքը չարգիլուեց Կովկաս եւ Ռուսաստան, ինչպէս այժմ է արւում:

1915-ի եւ յետագայ նահանջներին 150–200 հազար թրքահայութիւն ապաստան գտաւ Կովկասում եւ Հայաստանում: Ի՞նչ խօսք, ցարական Ռուսիան ինքն եւս ոճրապարտ էր թրքահայութեան հանդէպ, բայց մի՞թէ աւելի թեթեւ է կշռում՝ Խորհրդային Ռուսիոյ ոճիրը՝ հանդէպ մեր տասանորդուած զանգուածների: Ինչպէ՞ս է որ, վերջապէս, Խորհրդային կառավարութիւնը տէր է կանգնում հին Ռուսաստանի ողջ ժառանգութեան, այն ինչ նա հրաժարւում է իր նախորդի փոխարէն պարտահատոյց լինելու՝ պատճառած զոհերի ու պարտքերի հանդէպ:

Կ՚ուզենք լանք, կ՚ուզենք ողբանք, փաստը մնում է փաստ: Հազար կղպանքներով փակ-